ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան Յակոբ Գրիգորեան Հաջի Մարգարեանցի անունով՝ Բեսսարաբիայի թեմի Բէլց քաղաքի հայոց եկեղեցու շինութեան օգտին չորս հազար ռուբլի նուիրաբերելու առթիւ։ 10 դեկտեմբ. թ. 1651։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան Դիմիտրի Յովհաննիսեան Լուսախանեանցի անունով՝ Բեսսարաբիայի թեմի Բէլց քաղաքի հայոց նորակառոյց եկեղեցու շինութեան օգտին քսան և հինգ հազար ռուբլի նուիրելու առթիւ։ 12 դեկտեմբ. թ. 1651։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան պ. Կարապետ աղա Լալայեանի անունով՝ Բագուայ Հայոց Կուլտուրական միութեան օգտին յիսուն հազար ռուբլի նուիրելու առթիւ։ 13 դեկտեմբ. թ. 1665։

Կոնդակ գոհունակութեան և Օրհնութեան Սիմէոն և Շահխանում Մալեան ամուսինների անունով՝ Գանձակ քաղաքի Հայոց եկեղեցական-ծխական դպրոցում հինգերորդ և վեցերորդ բաժանմունք բանալու համար տարեկան երեք հարիւր ռուբլի նուիրելու առթիւ։ 14 դեկտեմբ. թ. 1671։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան պ. Արսէն Մովսիսեան Բուդաղեանի անունով՝ Վեհարանին 36 աթոռ և 36 բազկաթոռ նուիրելու առթիւ։ 22 դեկտ. թ. 1808։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան Նոր-Նախիջևանի առաջի կարգի վաճառական պ. Յովհաննէս Մարտիրոսեան Շապոշնիկեանցի անունով՝ Գէորգեան ճեմարանի մատենադարանի հայագիտական բաժնի համար 500 ռուբլի նուիրելու առթիւ. նոյնպէս և խոստացել է 1913 թուին 500 ռ. այնուհետև պարբերաբար ըստ իւր կարողութեան նոյն նպատակի համար նպաստ տալու։ 22 դեկտեմբ. թ. 1809։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան Սոփիա Մարտիրոսեանցի անունով Շամախու Հայոց եկեղեցուն զարդեր և սրբոց պատկերներ նուիրելու առթիւ։ 28 դեկտեմբերի թ. 1847։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան Աղաֆան Օհանեանցի անունով Դանձակի Հայոց եկեղեցու և ծխական դպրոցի բարեզարդութեան համար ծախսած 1077 ռ. առթիւ։ 28 դեկտեմբ. թ. 1848։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան Վարդանեան ամուսիններուի անունով Հին-Նախիջևանի եկեղեցուն զանգ, բրոնզեայ ջահ և այլ նուիրաբերութեանց առթիւ։ 28 դեկտեմբ. թ. 1849։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան օր. Եղիսաբէթ Հայրապետեանցի անունով ս. Էջմիածնի Գայիանէի վանքի նորոգութեան նուիրած մի հազար ռուբլու առթիւ։ 28 դեկտեմբ. թ. 1866։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 693 նոյեմբեր 28/29. Սինոդը որոշեց պատուիրել Մայր Աթոռի կալուածոց կառավարիչ պ. Լ. Տէր Աւետիքեանին Հաղբատ, Սանահին և Հաղարծին վանքերի եկամուտները ստանալ և յանձնել նոյն վանքերի վանահայրերին. այլ և պատուիրել Վրաստանի թեմի ժամանակաւոր կառավարչին Սանահնի վանքի կալուածների և յատկապէս էլէկտրական կայարանի մասին ճիշտ հաշիւ ներկայացնել Սինոդին մինչև առաջիկայ դեկտ. 20-ը՝ սկսած վանքի կառավարութիւնն իւր հսկողութեան տակ առնելու օրից։

Թ. 694 28/29 նոյեմբերի. Սինոդը որոշեց թոյլ տալ Մայր Աթոռի վանական կառավարութեանը Վաղարշապատցի Թադուհի Սաֆարեանի Մ. Աթոռին նուիրած տունը հրապարակական աճուրդախօսութեամբ վաճառել բնիկ Վաղարշապատցիներից աւելի գին տուողին և կատարած աճուրդախօսութեան արդիւնքը ներկայացնել Սինոդիս ի հաստատութիւն։